



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԻԵՆՆԱՅԻ ԱԲԲԱՅԱՅՐ ՀՈԳՀ. Տ. ՊՈՂՈՍ ՎՐԴ. ԳՈԹԱՆԵԱՆԻ ԱՅՑԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեցաբթի, 18 Յուլյուարի կեսօրին ընդունեց այցելութիւնը Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի բաժինի Աբբահայր Հոգհ. Տ. Պողոս Վրդ. Գոթանեանի, որ Լու Անձելը կը գտնուի, Մխիթարեան Հայրերու վարժարանին վերաբերող հարցերու հետապնդման առիթով: Հայր Սուրբին կ'ընկերանար վարժարանի Տնօրին Հոգհ. Տ. Պողոս Վրդ. Ղազարեան:

Ծանօթացման հանդիպումին, Առաջնորդ Սրբազան ու հիւր հոգեւորականները ունեցան տեղեկութիւններու փոխանակումի պահ մը: Աբբահայրը ծանօթութիւններ տուաւ Մխիթարեան Միաբանութեան աշխատանքներուն մասին, կանգ առնելով Վիեննայի մէջ հաստատուած միաբաններու գործունեութեան վրայ: Ան նաեւ որոշ տեղեկութիւններ տուաւ թայանկայի մէջ հաստատուած Մխիթարեան Հայրերու վարժարանին ու անոր սերնդակերտ աշխատանքներուն մասին, իբրեւ մէկ մասնիկը՝ Մխիթարեաններու ազգօգուտ ծառայութիւններուն: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, եւ նկատի ունենալով, որ Աբբահօր առաջին այցելութիւնն էր Ազգ. Առաջնորդարան, ընդհանուր գիծերու մէջ ծանօթութիւններ տուաւ հոգեւոր, կրթական ու մշակութային այս աշխատանքներուն մասին, որոնք յառաջ կը տարուին ազգային Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ: Ան նաեւ վեր առաւ Մխիթարեան միաբանութեան դերն ու ծառայութիւնները՝ մէր մշակոյթի զարգացման մէջ եւ հաստատեց, թէ Ազգ. Առաջնորդարանը սերտ գործակից մը կը նկատէ Մխիթարեան վարժարանը եւ բարձր կը գնահատէ անոր հայակերտումի գործը:

PRELATE WELCOMES VERY REV. FR. BOGHOS KOJANIAN ABBOT OF THE MEKHITARIST CONGREGATION OF VIENNA

On Tuesday, January 18th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the abbot of the Mekhitarist Congregation of Vienna, Very Rev. Fr. Boghos Kojanian, who is currently in Los

Angeles to meet with the administration of the Mekhitarist Fathers' School. He was accompanied by the school's principal Very Rev. Fr. Tavit Ghazarian.

During their meeting, the Prelate and guest clergy exchanged information about the endeavors of their respective churches. Fr. Boghos reported on the activities carried out by the Mekhitarist Congregation in Vienna, and gave information on the Mekhitarist Fathers' School in Tujunga.

Given that it was the abbot's first visit to the Prelacy, the Prelate gave information on the spiritual, educational, and cultural endeavors of the Prelacy. He spoke highly of the role and service of the Mekhitarist Order in the history of the Armenian people, and of the close relationship between the two churches.